ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.01.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2022/01

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ
Մասնակից՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի ներկայացուցիչներ՝ Կ. Հովհաննիսյանի, Գ. Բոյախչյանի, Ս. Բաղալյանի,
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն՝ Փ. Գևորգյանի, ներկայացուցիչ՝ Հ. Ենգոյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, աուդիտորական ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 30.12.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 30.12.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 03.01.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 համարի ծածկագիրը:

12.01.2022թ.-ին, 19.01.2022թ.-ին և 31.01.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 19.01.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.01.2022թ.-ին:

2. <u>«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն 30.12.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար՝ հայտարարվել է "ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության համաձայն՝ «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝

Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետում ներկայացված պահանջը. մասնավորապես՝ Ընկերությունը չունի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք. Ընկերությունը ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում:

Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույց 2-րդ կետում ներկայացված պահանջը. մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրով ներկայացված տվյալներով չի ապահովվում Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության (Bakertilly international) մասնակցությունը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում և/կամ ներկայացված չեն Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի փոխկապակցված լինելու հիմնավորումները (որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն) (Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը ենթակա է շտկման և նոր հայտարարագրում ներկայացված շտկված տվյալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել և/կամ ներկայացնել Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն փոխկապակցվածությունը հիմնավորող փաստաթղթերը):

Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետում ներկայացված պահանջը. Մասնավորապես՝ հայտով ներկայացվել է, որ ընկերության ղեկավարության 67%-ը ունի ACCA որակավորում, այնինչ հրավերով պահանջվում էր, որ ղեկավարության առնվազն 80%-ը ունենա ACCA որակավորում (շտկման ենթակա է Հավելված 1.3-ը՝ «Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն»-ը և շտկված Հավելված 1.3-ում ներկայացված տվյալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել (ընդհանուր ղեկավարների ցանկը, ACCA որակավորում

ունեցողների համապատասխան հավաստագրերը և վերջիններիս Ընկերությունում որպես ղեկավար աշխատելու հիմնաորող փաստաթղթերը):

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3-րդ կողում բացակայում է հայտարարգիրը ներակացնող անձի ստորագրությունը (շտկման ենթակա է Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը):

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղաը էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունները:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի 24.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, քանի որ հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին /Աուդիտորական գործունեության մասին ՀՀ օրենքի պահանջներին/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն նշել ենք, «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի կարիքների համար՝ հայտարարվել է "ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության համաձայն՝ «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել է անհամապատասխանություններ:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը գնահատող հանձնաժողովը որոշել է՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով մեկ աշխատանքային օրով

կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարը կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն սահմանված ժամկետում շտկել է գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները /ապացույցները՝ կցվում են/, սակայն՝ 24.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կողմից «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար, քանի որ հայտը չի համապատասխանել հրավերի պահանջներին /Աուդիտորական գործունեության մասին ՀՀ օրենքի պահանջներին/:

Տվյալ պարագայում "ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22" ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելով՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից շտկվել են և ուղարկվել գնահատող հանձնաժողովի համապատասխան էլ. հասցեին, սակայն՝ անհասկանալի և չհիմնավորված կերպով ՓԲԸ-ի հայտը մերժվել է:

Ավելին, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը մերժվել է առանց որևէ հիմնավորման առ այն, որ իբրև թե հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին /Աուդիտորական գործունեության մասին ՀՀ օրենքի պահանջներին/, սակայն պարզ չէ, թե հստակ որ փաստաթուղթը չի համապատասխանում հրավերի պահանջներին և որոնք են այդ անհամապատասխանությունները, մնում են անորոշ:

Մինչդեռ, ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի անդամը անդամը պատասխանատվություն է կրում իր որոշումների, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու հիմնավորվածության համար:

ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 43-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ այտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի հիման վրա ստացված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի

հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ: Ընդ որում, հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են արձանագրված անհամապատասխանությունները և դրանցով պայմանավորված հայտերի մերժման հիմքերը:

Գտնում ենք, որ վերոհիշյալի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 2017թ. թիվ 526-Ն որոշման 26-րդ կետի 9-րդ ենթակետի և 43-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, որոնք էլ իրենց հերթին հանգեցրել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 7-րդ հոդվածի խախտմանը:»:

Ելնելով վերոգրյալներից՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

Ընկերությունը, 14.01.2022թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 բողոքը, որով վիճարկել ենք «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի /այսուհետև նաև՝ Պատվիրատու/ կարիքների համար հայտարարված "ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22" ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Սույն բողոքի քննությանը նվիրված նիստի ընթացքում բարձրացված հարցերի հիման վրա և դրա արդյունքում ներկայացվում են թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 բողոքի լրացումը և պահանջների հստակեցումը/լրացումը:

Ըստ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝

1.Կատարողը պետք է ունենա աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա և պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում:

2. Կատարողը պետք է հանդիսանա Միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն:

Ինչպես նշել էինք ներկայացրած բողոքով, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2021թ. տեղի ունեցած նիստի արձանագրության համաձայն՝ «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտի փաստաթղթերում արձանագրվել է անհամապատաս-խանություն, մասնավորապես՝

ա) Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետում ներկայացված պահանջը. մասնավորապես՝ Ընկերությունը չունի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք. Ընկերությունը ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում:

բ) Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույց 2-րդ կետում ներկայացված պահանջը. մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրով ներկայացված տվյալներով չի ապահովվում «Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության (Bakertilly international) մասնակցությունը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում և/կամ ներկայացված չեն Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի փոխկապակցված լինելու հիմնավորումները (որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն) (Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը ենթակա է շտկման և նոր հայտարարագրում ներկայացված շտկված տվյալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել և/կամ ներկայացնել Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն փոխկապակցվածությունը հիմնավորող փաստաթղթերը):

Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետում ներկայացված պահանջը. Մասնավորապես՝ հայտով ներկայացվել է, որ ընկերության ղեկավարության 67%-ը ունի ACCA որակավորում, այնինչ հրավերով պահանջվում էր, որ ղեկավարության առնվազն 80%-ը ունենա ACCA որակավորում (շտկման ենթակա է Հավելված 1.3-ը՝ «Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն»-ը

և շտկված Հավելված 1.3-ում ներկայացված տվյալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել (ընդհանուր ղեկավարների ցանկը, ACCA որակավորում ունեցողների համապատասխան հավաստագրերը և վերջիններիս Ընկերությունում որպես ղեկավար աշխատելու հիմնաորող փաստաթղթերը):

Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3-րդ տողում բացակայում է հայտարարգիրը ներակացնող անձի ստորագրությունը (շտկման ենթակա է Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը):

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փատաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղաը էլեկտրոնային եղանակով ծանուցել է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս¬խանությունները:

Այնուհետև գնահատող հանձնաժողովի 24.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ արձանագրվել է հետևյալը.

«…2-րդ կետի մասով ընկերությունից ստացված փաստաթղթերը ապացուցում են ընկերության անդամակցությունը Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպությանը որպես անդամ, սակայն չի ստացվել որևէ փաստաթուղթ, որը կապացուցի Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպության մասնակցությունը ընկերության կանոնադրական կապիտալում կամ հայաստանյան մասնաճյուղ/ներկայացուցչություն լինելը, ուստի այս կետով ներկայացրած փաստաթղթերը համարվում են անբավարար: Ինչ վերաբերում է 1-ին կետին, ապա ընկերության կողմից ներկայացվել է դատարանի կողմից կայացրած որոշում, որով կիրառվել է հայցի ապահովման միջոց, այն է՝ «…պահպանել ՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը…», մինչդեռ դատարանը չի բավարարել ընկերության կողմից միջնորդվող մեկ այլ ապահովում, այն է՝ «…արգելել ՀՀ ֆինանսների նախարարությանը կատարել այնպիսի գործողություն կամ ընդունել լիցենզիայի հետ կանչման վերաբերյալ վարչական ակտեր, որոնք կսահմանափակեն կամ կարող են սահմանափակել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունքները….»:

Այսպիսով, հրավերի հավելված 6-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացուցի համաձայն՝ ընկերությունը պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված

կառույցի կողմից վարվող ռեեստրում, և այս մասով ընկերությունը չի բավարարել նշված պահանջին, ինչն էլ նշանակում է, որ այն պահին չունի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք, ուստի վերը նշված հիմքով գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը:

Գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված վերը նշված հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

1-ին հիմք՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն չունի աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք, քանի որ ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում

Այս հիմքի կապակցությամբ բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Աուդիտորական գործունեության մասին» 2019թ. ընդունված ՀՀ օրենքի հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին՝ պահանջելով, որպեսզի վերջինս վերադարձնի ՀՀ ՖՆ-ին իր լիցենզիան (գրությունը կցվում է):

Վերոհիշյալի հետևանքով «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ իրավահարաբերության առկայությունը ճանաչելու պահանջով (թիվ ՎԴ/1299/05/21 գործ):

Ներկայացված վարչական գործով «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերությունը 15.03.2021թ. դիմել է դատարանին՝ հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ: Նշված միջնորդությամբ ՓԲԸ-ն նշել է, որ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ ըստ 2021 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած ՀՕ-283-Ն օրենքի 30-րդ հոդվածի այն աուդիտորական կազմակերպությունը, որը չի անդամակցում մասնագիտացված կառույցներին, իրավունք չունի մատուցելու աուդիտորական ծառայություններ, գտնում ենք, որ մինչև սույն գործով վեճն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելը էականորեն կդժվարեցնի դատական ակտի կատարումը, քանի որ միջոցներ չձեռնարկելը կարող է բերել այնպիսի իրավիճակի, որ Ընկերությունը չիրականացնելով իր միակ տնտեսական գործունեությունը: Ամբողջ վերոգրյալը առաջացնում է հիմնավոր ռիսկեր, որ հայցի ապահովման միջոցներ չձեռնարկելու դեպքում բարձր է հավանականությունը, որ Ընկերությունը կկրի գույքային վնասներ: Ընդ որում, նման հայցի ապահովում ձեռնարկելը կլինի այն անհրաժեշտ ու համաչափ միջոցը, որը թույլ չի տա Ընկերությանը զգալի վնասներ պատճառվել մինչև սույն գործն ըստ էության լուծող դատական ակտն օրինական

ուժի մեջ մտնելը: Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումներով, հաշվի առնելով, որ նշված հայցի ապահովման միջոցները չձեռնարկելու արդյունքում Ընկերության համար վրա հասնելիք հնարավոր անբարենպաստ հետևանքները դժվարեցնելու են, մինչև անգամ կարող են անհնարին դարձնել սույն գործն ըստ էության լուծող դատական ակտի կատարումը՝ ընկերությունը միջնորդել է կիրառել համապատասխան հայցի ապահովման միջոցներ:

Դատարանը 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշմամբ արգելվել է ՀՀ ֆինանսների նախարարության պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիան: Նույն որոշմամբ որոշվել է պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը):

Հայցվոր ընկերության կողմից նման հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդություն ներկայացնելու նպատակն ակնհայտ է, որ եղել է ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար իրավական երաշխիք ունենալը (վերոհիշյալ հիմնավորումը առկա է որոշման պատճառաբանական մասում): Հենց դրան է կոչված նաև հայցի ապահովման դատավարական ինստիտուտը՝ դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական կազմակերպություն է համարվում աուդիտորական ծառայություններ իրականացնող իրավաբանական անձը:

Նույն օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայությունների իրականացման հիմքը հանդիսանում է լիազորված մարմնի կողմից տրամադրված լիցենզիայի առկայությունը:

Այլ կերպ ասած, «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի համաձայն՝ աուդիտորական ծառայություններ կարող է իրականացնել միայն այն աուդիտորական կազմակերպությունը, որը ունի լիազոր մարմնի կողմից տրամադրված լիցենզիա:

Հենց այս տրամաբանությամբ է Դատարանի կողմից բավարարվել «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ընկերության 15.03.2021թ. հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը և որոշել արգելել ՀՀ ֆինանսների նախարարության պահանջել «Բեյքեր

Թիլլի Արմենիա» ՓԲԸ թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիան և պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը):

Բանն այն է, որ լիցենզիա ունենալու կարգավիճակի պահպանությունը «Աուդիտորական գործունեության մասին» 2002թ. ՀՀ օրենքի տրամաբանությամբ նշանակում է, որ աուդիտորական կազմակերպությունը ունի իրավունք իրականացնելու աուդիտորական գործունեություն: Համապատասխանաբար, կազմակերպությունը չի կարող ունենալ իրավունք զբաղվելու աուդիտորական գործունեությամբ, եթե չպահպանվի իր՝ լիցենզիա ունենալու կարգավիճակը, քանի որ աուդիտորական գործունեությամբ զբաղվելու իրավունքը բխում է լիզենզիա ունենալու կարգավիճակից:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ լիցենզիա ունենալու կարգավիճակի պահպանությունը իր մեջ ներառում է, կլանում աուդիտորական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Վերոհիշյալը բխում է հենց Դատարանի 17.03.2021թ. կայացրած հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման տրամաբանությունից, քանի որ նման հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշման նպատակն ակնհայտ է, որ եղել է ընկերության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար իրավական երաշխիք ունենալը: Հենց դրան է կոչված նաև հայցի ապահովման դատավարական ինստիտուտը՝ դատարանի կողմից նախապես ձեռնարկվող որոշակի միջոցներով հնարավոր բացասական հետևանքներից պաշտպանել հայցվորի իրավունքները և օրինական շահերը:

Այս տեսանկյունից գտնում ենք, որ Դատարանի նման իրավապարտադիր որոշման պարագայում և դրա լույսի ներքո Ընթացակարգի հրավերի՝ «Կատարողը պետք է ունենա աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա և պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում» պահանջը բավարարվում է կիրառված հայցի ապահովման միջոցի պայմաններում:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ Դատարանի վկայակոչված որոշումից հետո «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն մասնակցել է բազմաթիվ պետական և համայնքային աուդիտորական ծառայությունների ձեռքբերման մրցույթների, դարձել հաղթող մասնակից, որի արդյունքում կնքվել են համապատասխան պայմանագրեր, և երբևիցե հարց չի առաջացել, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն չունի աուդիտորական գործունեությամբ զբաղվելու իրավունք:

2-րդ հիմք՝ Կատարողը պետք է հանդիսանա Միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 61-րդ հոդված համաձայն՝

1. Ներկայացուցչություն է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որը ներկայացնում է իրավաբանական անձի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

2. Մասնաճյուղ է համարվում իրավաբանական անձի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումը, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:

3. Ներկայացուցչությունները և մասնաճյուղերն իրավաբանական անձինք չեն ու գործում են իրավաբանական անձի հաստատած կանոնադրությունների հիման վրա:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 75-րդ հոդված համաձայն՝

1. Տնտեսական ընկերությունը համարվում է դուստր, եթե այլ (հիմնական) տնտեսական ընկերակցություն կամ ընկերություն, նրա կանոնադրական կապիտալում իր գերակշռող մասնակցության ուժով կամ նրանց միջև կնքված պայմանագրին համապատասխան՝ հնարավորություն ունի կանխորոշել նման ընկերության որոշումները:

2. Դուստր ընկերությունը պատասխանատվություն չի կրում հիմնական ընկերակցության կամ ընկերության պարտքերի համար:

3. Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը, որը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունի, դուստր ընկերության հետ համապարտ պատասխանատվություն է կրում իր ցուցումների համաձայն կնքված գործարքների կատարման համար: Հիմնական ընկերակցությունը կամ ընկերությունը դուստր ընկերությանը պարտադիր ցուցումներ տալու իրավունք ունեցող է համարվում, եթե այդ իրավունքը նախատեսված է դուստր ընկերության հետ կնքված պայմանագրում:

ՀՀ քաղաքացիական օրենգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի լույսի ներքո՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպության անդամ՝ հայտնում ենք, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպության միջև կնքված պայմանագրի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպության դուստր ընկերություն, քանի որ վերոհիշյալ պայմանագրի ուժով Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլը հնարավորություն ունի կանխորոշել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի որոշումները:

Մասնավորապես, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպության միջև կնքված պայմանագրի համապատասխան կետերի համաձայն՝

2.4 Անդամների իրավունքները

Ընկերությանն անդամակցությունը Անդամներին տալիս է հետևյալ իրավունքները.

(ա) Ապրանքային նշաններն օգտագործելու իրավունք՝ համաձայն Ապրանքանիշի օգտագործման լիցենզիայի 2-րդ բաժնի պահանջների, բայց ոչ այլ կերպ.

բ) Ընկերության կողմից կազմակերպված՝ Անդամների ժողովներին և կոնֆերանսներին մասնակցելու իրավունք.

գ) Անդամների ժողովներում քվեարկելու իրավունք՝ Կանոնադրության դրույթներին համապատասխան.

դ) Ընկերությանն առնչվող բյուջեների և ֆինանսական տեղեկատվության հասանելիություն և Ընկերության կողմից պատրաստված ձեռնարկների, տեխնիկական տեղեկատվության և շուկայավարման նյութերի օգտագործման իրավունք. և

(ե) իրավունք ակնկալելու, որ Ընկերությունը մյուս Անդամների անունից կապահովի սույն Կանոնակարգերի պահանջների կատարումը թերացող Անդամի կողմից, ինչպես դա թույլատրվում է 2.3 կետով (Կանոնակարգերի կատարման պարտադրում):

2.6 Տարածքային իրավունքների բացառում

Ընկերությանն անդամակցությունը Անդամներին չի տալիս բացառիկ իրավունք՝ իրականացնելու իրենց պրակտիկան որևէ կոնկրետ տարածքում, և բոլոր Անդամներն ազատ են սպասարկելու հաճախորդներին ցանկացած ոլորտում, որտեղ նրանք կարող են դա անել՝ իրենց մասնագիտական պարտավորություններին և իրավասու լիցենզավորող մարմինների պահանջներին համապատասխան:

2.7 Անդամների պարտականությունները

Քանի դեռ ընկերությունը (կամ ընկերությունների միությունը) Անդամ է, այն պարտավոր է ենթարկվել հետևյալին.

ա) Կանոնադրություն.

(բ) սույն Կանոնակարգերը (ներառյալ Ապրանքային նշանների լիցենզիայի 2-րդ բաժնի՝ ապրանքային նշանների օգտագործման հետ կապված դրույթները).

(գ) Որակի վերահսկման ծրագիր.

դ) Ընկերությանը պահանջվող վճարումների կատարում (կետ 11.2 (Տարեկան վճարներ) և կետ 11.3 (Տարեկան վճարների կատարում).

ե) այնպիսի ֆինանսական և այլ տեղեկատվության տրամադրում, որը կարող է ժամանակ առ ժամանակ պահանջվել Խորհրդի կողմից, և այնպիսի տեղեկատվության տրամադրում, որը կպահանջվի Որակի վերահսկման ծրագրի հետ կապված. և

զ) Խորհրդին Անդամի գործունեության կամ կառուցվածքի ցանկացած էական փոփոխության մասին տեղեկացում (ներառյալ Անդամի բիզնեսի ցանկացած էական փոփոխություն, որևէ էական միաձուլում կամ բաժանում և Անդամի վերահսկողության ցանկացած փոփոխություն):

2.8 Անդամների նկատմամբ սահմանափակումներ

Ընկերության անդամության ժամանակահատվածում ոչ մի Անդամ չի կարող.

(ա) ներկայացնել, որ նա որևէ այլ Անդամի կամ Ընկերության գործընկերն է կամ գործակալը, լինի դա խոսքով կամ վարքագծով.

(բ) ստորագրել որևէ փաստաթուղթ Ընկերության անունից կամ որևէ պարտավորություն ստանձնել նրա անունից.

(գ) սկսել որևէ վարույթ կամ ձեռնարկել որևէ այլ քայլ՝ սույն Կանոնակարգերի պայմանները մեկ այլ Անդամի նկատմամբ կիրարկելու համար. և

դ) լինել հաշվապահական ընկերությունների ցանկացած այլ միջազգային միության անդամ, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհրդի կողմից առկա է անմիջական գրավոր թույլտվություն:

Վերոհիշյալ պայմանավորված գտնում ենք, որ անհիմն է Գնահատող հանձնաժողովի 24.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով արձանագրված այն հանգամանքը, որ Ընկերությունը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի պահանջներին, քանի որ ըստ Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի՝ կատարողը պետք է հանդիսանա Միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն, քանի որ ներկայացված անդամակցության վկայականը վկայում է դուստր ընկերություն լինելու հանգամանքը:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ն ինքն իր հերթին չի համապատասխանել Ընթացակարգի հրավերի Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի հենց այս պահանջին, քանի որ ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է դառնում, որ վերջինս չի հանդիսանում Միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն՝ ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 61-րդ և 75-րդ հոդվածի պահանջների համատեքստում, իսկ BDO EURASIA B.V. ընկերության 22,936488% մասնակցությունը նրա կանոնադրական յապիտալում վերջնիս չի դարձնում միջազգային հեղինակավոր կազմակերպության մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն:

Նման պարագայում գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ և խտրական՝ բավարար գնահատելով «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հայտը:»:

Վերոգրյալների հիման վրա, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոքի փոփոխված և վերջնական պահանջը և խնդրել է՝

1. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 24.12.2021թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետով կայացրած որոշումները:
2. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:
3. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ--ի հայտը բավարար գնահատելու վերաբերյալ կայացրած որոշումը:
4. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

3. <u>«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.01.2022թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/98-2022 գրությամբ դիմել է «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 30.12.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 05.01.2022թ.-ի թիվ 01//4-2022 գրությամբ, ներկայացնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված փաստաթղթերը, հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 04.01.2021թ. գրությանը, կից ներկայացնում ենք ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 բողոքի վերաբերյալ պահանջվող փաստաթղթերը, ինչպես նաև մեր դիրքորոշումը բողոքի նյութի վերաբերյալ:

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի կողմից հայտարարված ՀՀԻսԱ-«ՀՀԻսԱ-9-ՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացված (շտկված) հայտը մերժելու մասին: Հայտը մերժվել է ՀՀ կառավարության 2017 թվակաի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետի հիման վրա՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ամբողջությամբ չշտկվելու հիմքով:

Ինչ վերաբերում է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից վկայակոչված ՀՀ կառավարության 2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 26-րդ կետի 9-րդ ենթակետի և 43-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին, ապա գնահատող հանձնաժողովի կողմից դրանք անշեղորեն կատարվել են: Համապատասխան արձանագրությամբ մատնանշված են բոլոր անհամապատասխանությունները հրավերի պահանջներին, ինչպես նաև մերժման հիմքը (տես կից Արձանագրություն №3-ի 1.1 կետը): Մասնավորապես՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը, քանի որ վերջինս «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն չունի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք: Նշենք, որ հրավերի անհամապատասխանությունը շտկելու մեր դիտարկմանը (տես կից Արձանագրություն №-ի 2.2 կետը) ի պատասխան Ընկերությունը ներկայացրել է դատարանի կողմից կայացված որոշում, որով կիրառվել է հայցի ապահովման միջոց, այն է՝ «...պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը...», մինչդեռ դատարանը չի բավարարել ընկերության կողմից միջնորդվող մեկ այլ ապահովման միջոցը, այն է՝ «...արգելել ՀՀ ֆինանսների նախարարությանը կատարել այնպիսի գործողություններ կամ ընդունել լիցենզիայի հետ կանչման վերաբերյալ վարչական ակտեր, որոնք կսահմանափակեն կամ կարող են սահմանափակել «Բեյքեր

Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունքները ...»:

Այսպիսով, Ընկերությունը վկայակոչում է դատարանի կողմից կայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մասնակի բավարարելու մասին մի որոշում, որը նույնիսկ այս պարագայում իր շահերից չի բխում, դատարանն ընդամենն արգելել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հետ վերցնել Ընկերության լիցենզիան և հայցի ապահովման միջնորդությունը չի բավարարել այն մասով, որով Ընկերությունը կշարունակեր ունենալ աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք: «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդածի 1-ին մասի համաձայն Աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում, իսկ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ընկերության մասին տեղեկությունները վերոնշյալ օրենքի իմաստով մասնագիտացված կառույցի ռեեստրում գրանցված չեն: Այսինքն դատարանը չի սահմանում այն պայմանները, որոնց բավարարման դեպքում կազմակերպությունը կարող է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունենալ, դատարանն ընդամենը ֆիքսել է ածի կողմից լիցենզիան պահպանելու, այլ ոչ թե աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունքը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ուզում ենք ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքին, որ Ընկերության կողմից փաստացի բողոքարկվում են գնման առարկայի բնութագրերը և հրավերի պահանջները, քանի որ ի սկզբանե հրավերով սահմանվել է, որ աուդիտորական կազմակերպությունը լինի մասնագիտացված կառույցի ռեեստրում ընդգրված: Ուստի, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն, բողոքը պետք է ներկայացվեր մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ինչը մեր պարագայում 2021 թվականի դեկտեմբերի 22-ն էր: Դրանից հետո օրենքով հստակ արգելվում է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնել համապատասխան բողոք: Այսինքն, մեր կարծիքով նման բողոքը պետք է թողնվի առանց քննության, քանի որ Ընկերությունը խախտել է գնման առարկայի բնութագրերի և հրավերի վերաբերյալ բողոք ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամկետը, և իր բողոքով պարզապես արհեստականորեն խոչընդոտում է պետական հիմնարկի կարիքների համար ծառայությունների ձեռքբերման գործընթացը:

Ուզում ենք տեղեկացնել նաև, որ 30.07.2021 թ-ի ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է գրություն (N 01/3-1/12237-2021), որով պահանջվում էր. «.... զերծ մնալ տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտը Ռեեստրում չգրանցված կազմակերպություններին պատվիրակելուց, քանի որ այդ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունները Օրենքի իմաստով չեն հանդիսանում աուդիտորական ծառայություններ, իսկ դրանց արդյունքում տրամադրված եզրակացությունները չեն հանդիսանամ աուդիտորական եզրակացություններ: Հետևաբար, Ռեեստրում չգրանցված կազմակերպությունների կողմից ծառայություններ ստացած կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ Օրենքի իմաստով կհամարվեն աուդիտի չենթարկված՝ դրանից բխող բոլոր հետևանքներով» (գրությունը կցվում է):

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ մեր կողմից 03.01.2022թ. N 01//1-2022 գրությամբ (գրությունը կցվում է) ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվել են բոլոր անհրաժեշտ հիմնավորումները և ւսոաջարկվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ հիմք ընդունելով ՀՀ Գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետը, և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 45-րդ կետը:

Բացի այդ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հանրային հեռարձակողի խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության (ներառյալ ծրագրային և ֆինանսական) վերաբերյալ հաղորդում, իսկ նույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հեռարձակողները պարտավոր են մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները ուստի խնդրում ենք սույն բողոքի քննության վերաբերյալ նիստերը կազմակերպել, գրավոր որոշումն ընդունել և հրապարակել հնարավորինս սեղմ ժամկետներում, որպեսզի օրենսդրությամբ չհիմնավորված բողոքարկումները չխոչընդոտեն պետական հիմնարկի բնականոն գործունեությունը:

Կից ներկայացնում ենք մրցույթի հրավերը, գնահատող հանձնաժողովի N2, N3 և N4 արձանագրությունները, մասնակիցների սկզբնական և շտկված հայտերը, շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը, ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N

01/3-1/12237-2021 գրությունը և մեր կողմից 03.01.2022թ-ին ՀՀ ֆինանսների նախաարարություն ներկայացված N01//1-2022 գրությունը:»:

Պատվիրատուն 18.01.2022թ.-ի թիվ 01//10-2022 գրությամբ հավելել է հետևյալը.

«Ի պատասխան 17.01.2022թ-ին ստացված «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ԳԲՔԱ-ԱՕ-2022/01 բողոքի հստակեցման գրությանը, ստորև ներկայացնում ենք բերված հիմնավորումների և պահանջների վերաբերյալ մեր դիրքորոշումը:

«Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի կողմից հայտարարված «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ- 01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից որոշում է կայացվել Ընկերության կողմից ներկայացված (շտկված) հայտը մերժելու մասին: Հայտը մերժվել է ՀՀ կառավարության 2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով սահմանված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 42-րդ կետի հիման վրա՝ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները ամբողջությամբ չշտկվելու հիմքով:

Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը մերժել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը, քանի որ վերջինս «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի համաձայն չունի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք և ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում (այսուհետ՝ Ռեեստր): Նշենք, որ հրավերի անհամապատասխանությունը շտկելու մեր դիտարկմանը ի պատասխան Ընկերությունը ներկայացրել է դատարանի կողմից կայացված որոշում, որով կիրառվել է հայցի ապահովման միջոց, այն է՝ «...պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը...», մինչդեռ դատարանը չի բավարարել ընկերության կողմից միջնորդվող մեկ այլ ապահովման միջոցը, այն է՝ «...արգելել ՀՀ ֆինանսների նախարարությանը կատարել այնպիսի գործողություններ կամ ընդունել լիցենզիայի հետ կանչման վերաբերյալ վարչական ակտեր, որոնք կսահմանափակեն կամ կարող են սահմանափակ ել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունքները...»:

Ինչպես նաև նշեցինք բողոքարկման նիստի ժամանակ, Ընկերությունը վկայակոչում է դատարանի կողմից կայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը մասնակի բավարարելու մասին մի որոշում, որը նույնիսկ այս պարագայում

իր շահերից չի բխում, դատարանն ընդամենն արգելել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հետ վերցնել Ընկերության լիցենզիան և հայցի ապահովման միջնորդությունը չի բավարարել այն մասով, որով Ընկերությունը կշարունակեր ունենալ աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք: «Աուդիտորական գործունեության մասին» օրենքի 6-րդ հոդածի 1-ին մասի համաձայն աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում, իսկ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ընկերության մասին տեղեկությունները վերոնշյալ օրենքի իմաստով մասնագիտացված կառույցի ռեեստրում գրանցված չեն: Այսինքն դատարանը չի սահմանում այն պայմանները, որոնց բավարարման դեպքում կազմակերպությունը կարող է աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունենալ, դատարանն ընդամենը ֆիքսել է անձի կողմից լիցենզիան պահպանելու, այլ ոչ թե աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունքը: Այս կոնտեքստում է, որ պետք է դիտարկել դատական ակտով սահմանված դրույթները: Մի պահ եթե նույնիսկ տվյալ դատական ակտը մեկնաբանվեր այն տրամաբանությամբ, որն առաջ է քաշում բողոք բերող կողմը (այսինքն՝ տվյալ դատական ակտով Ընկերությանն իրավունք է վերապահվում ոչ միայն պահպանել լիցենզիան, այլև աուդիտորական ծառայություն մատուցելու իրավունքը), ապա ստացվում է, որ բողոք բերող կողմը նշված դատական ակտը ընկալում է որպես խտրականություն սահմանող և անհավասար մրցակցային պայմաններ ապահովելուն ուղղված գործիք, քանի որ այդ պարագայում բողոք բերողի կողմից տրված մեկնաբանության լույսի ներքո ստացվում է, որ դատարանը առանձնացրել է աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունեցող կազմակերպությունների 2 խումբ՝ մի խմբում ընդգրկելով այն կազմակերպություններին, որոնք, հետևելով օրենքի տառին, նախաձեռնել և ներառվել են մասնագիտացված կառույցի ռեեստրում, իսկ մյուս խմբում՝ այն կազմակերպություններին, որոնք ներառված չեն այդ ռեեստրում, բայց նմանատիպ դատական ակտերի ուժով իրավունք ունեն մատուցելու աուդիտորական ծառայություններ: Սա խտրական մոտեցում է առաջին խմբում պայմանականորեն ներառված կազմակերպությունների նկատմամբ, քանի որ վերջիններս ի տարբերություն երկրորդ խմբում պայմանականորեն ներառված կազմակերպությունների, ստիպված են լինում բավարարել լրացուցիչ պահանջների (այդ թվում նաև ծախսատար, ինչպես օրինակ՝անդամավճարի վճարումը), և ենթակա լինել վերահսկողական մեխանիզմների կիրառմանը մասնագիտացված կառույցի կողմից, ինչն էլ

բնականաբար ազդում է ծառայությունների մատուցման ինքնարժեքի վրա՝ առաջացնելով անհավասար մրցակցային պայմաններ:

Անգամ մի կողմ դնելով Ընկերության աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունենալու/չունենալու հանգամանքը, Պատվիրատուն «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում հրավերով սահմանել է ոչ միայն աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք ունենալը, այլև մասնագիտացված կառույցի ռեեստրում ներառված լինելու պահանջը: Նույնիսկ եթե ենթադրենք, որ Ընկերությունն ունի աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք, միևնույնն է Ընկերությունը ներառված չէ վերոնշյալ ռեեստրում: Բողոք բերող անձի պնդումն այն մասին, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում ներառված լինելու պահանջը (անուղղակիորեն) բավարարվում է դատարանի կողմից կիրառված հայցի ապահովման միջոցի սահմաններում չունի իրավական և փաստական որևէ հիմք, քանի որ այդ դեպքում հարց է առաջանում, թե ինչու Ընկերությունը չի վճարում նախատեսված անդամավճարը այդ մասնագիտացված կառույցին, եթե ըստ Ընկերության ներկայացուցչի դատական ակտով Ընկերությունը դիտարկվում է մասնագիտացված կառույցի ռեեստրում ներառված: Հետևաբար հստակ է, որ Ընկերությունը չի հանդիսանում նշված մասնագիտացված կառույցին անդամակցող, ինչի հիման վրա էլ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի կողմից մերժվել է Ընկերության հայտը:

Ուզում ենք բողոքը քննող անձի ուշադրությունը ևս մեկ անգամ հրավիրել այն փաստին, որ Ընկերությունը անգամ չի դիմել Ռեեստրում ներառվելու համար և գնումների ընթացակարգերին մասնակցել է՝ ներկայացնելով դատարանի վերոնշյալ որոշումը: Ընկերության տնօրենը բողոքարկման նիստի ժամանակ նշեց, որ Ռեեստրում չընդգրկվելու պատճառ է հանդիսացել կառույցի կողմից աուդիտորական ընկերությունների հաճախորդ-կազմակերպություններին վերաբերող գաղտի տեղեկատվության տրամադրման հնարավոր պահանջը, ինչը մեր կարծիքով անհիմն մեղադրանք է ՀՀ ֆինանսաների նախարարության կողմից հավատարմագրված մասնագիտացված կառույցի նկատմամբ:

Ինչ վերաբերում է միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության դուստր ընկերություն լինելուն, հայտնում ենք, որ այն փաստը, որ բողոք բերող կողմը մեջբերում է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպության միջև կնքված Համաձայնագրից որոշ դրույթներ, դեռ չի նշանակում, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ

կազմակերպության դուստր ընկերություն: Որպեսզի կարողանանք հստակ պատկերացում կազմել, թե արդյոք դա այդպես է, անհրաժեշտ է ուսումնասիրել վերոնշյալ համաձայնագիրը, սակայն բողոք բերող կողմի պնդմամբ դա համարվում է գաղտի փաստաթուղթ և ենթակա չէ ներկայացման: Հետևաբար ձեռքի տակ չունենալով որևէ արժանահավատ տեղեկատվություն դուստր ընկերության գոյության փաստի մասին, Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը համարել է, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն չի հանդիսանում Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպության դուստր ընկերություն: Իսկ այն մեջբերումները Համաձայնագրից, որոնք կատարում է բողոք բերող անձը, չի վկայում անպայմանորեն այն մասին, որ Բեյքեր Թիլլի Ինթերնեշնլ կազմակերպությունը հնարավորություն ունի կանխորոշել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի որոշումները: Նշենք նաև, որ Ընկերության հայտը չի մերժվել դուստր ընկերություն չլինելու հանգամանքով պայմանավորված, այլ Ռեեստրում ընգրկված չլինելու պատճառով և այստեղ բերված մեր բացատրությունները, ինչպես նաև Արձանագրությունում այս կետի վերաբերյալ մեր մեկնաբանությունները նպատակ են ունեցել ուշադրություն հրավիրել այն փաստին, որ Ընկերությունը փորձում է Պատվիրատուի ձևակերպած ցանկացած պահանջ ներկայացնել իրեն հարմար լույսի ներքո: Ի դեպ, բողոքի պահանջի հստակեցման հիմնավորումներում Ընկերությունը պարբերաբար հղում է կատարել 2002թ-ին ընդունված, սակայն 2020թ-ին ուժը կորցրած «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքին, անտեսելով գործող օրենքը, ինչը նույնպես անընդունելի է աուդիտի ոլորտի կազմակերպության համար:

Եվ վերջում կրկին ուզում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել 30.07.2021թ-ին ՀՀ ֆինանսների նախարարության N 01/3-1/12237-2021 գրությանը, որով պահանջվում է. «....զերծ մնալ տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտը Ռեեստրում չգրանցված կազմակերպություններին պատվիրակելուց, քանի որ այդ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունները Օրենքի իմաստով չեն հանդիսանում աուդիտորական ծառայություններ, իսկ դրանց արդյունքում տրամադրված եզրակացությունները չեն հանդիսանում աուդիտորական եզրակացություններ: Հետևաբար, Ռեեստրում չգրանցված կազմակերպությունների կողմից ծառայություններ ստացած կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի իմաստով կհամարվեն աուդիտի չենթարկված՝ դրանից բխող բոլոր հետևանքներով»: Հանրային հեռարձակողի խորհուրդը չի կարող թույլ տալ հանրային հեռարձակողների ֆինանսական հաշվետվությունները համարվեն աուդիտի չենթարկված, քանի որ «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով Հանրային հեռարձակողի խորհուրդը մինչև յուրաքանչյուր տարվա

ապրիլի 1-ը Ազգային ժողով է ներկայացնում Հանրային հեռարձակողների նախորդ տարվա գործունեության (ներառյալ՝ ծրագրային և ֆինանսական) վերաբերյալ հաղորդում, իսկ նույն օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Հեռարձակողները պարտավոր են մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 1-ը հրապարակել իրենց տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում ենք մերժել Ընկերության կողմից ներկայացված բողոքը և դրանով խնդրարկվող պահանջներն ամբողջությամբ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2022/01 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա:

iii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար թունելների պահպանման աշխատանքներ կատարման պետական գնման պայմանագրի (այսուհետ նաև՝ Պայմանագիր) հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ բացի այլ չափորոշիչներից.

- Կատարողը պետք է ունենա աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա և պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում:

- Կատարողը պետք է հանդիսանա Միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն և «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ն:

v. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 2.2-րդ և 2.3-րդ կետերի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաթեթում առկա է անհամապատասխանություն հրավերի պահանջներին. Մասնավորապես՝

- Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետում ներկայացված պահանջը, մասնավորապես՝ Ընկերությունը չունի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք. Ընկերությունը ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում:

- Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույց 2-րդ կետում ներկայացված պահանջը, մասնավորապես՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարգրով ներկայացված տվյալներով չի ապահովվում Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության (Bakertilly international) մասնակցությունը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում և/կամ ներկայացված չեն Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի փոխկապակցված լինելու հիմնավորումները (որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն) (Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը ենթակա է շտկման և նոր հայտարարագրում ներկայացված շտկված տվյալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել և/կամ ներկայացնել Բեյքեր-Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր-Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն փոխկապակցվածությունը հիմնավորող փաստաթղթերը):

- Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետում ներկայացված պահանջը. Մասնավորապես՝ հայտով ներկայացվել է, որ ընկերության ղեկավարության 67%-ը ունի ACCA որակավորում, այնինչ հրավերով պահանջվում էր, որ ղեկավարության առնվազն 80%-ը ունենա ACCA որակավորում (շտկման ենթակա է Հավելված 1.3-ը՝ «Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն»-ը և շտկված Հավելված 1.3-ում ներկայացված տփալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել (ընդհանուր ղեկավարների ցանկը, ACCA

որակավորում ունեցողների համապատասխան հավաստագրերը և վերջիններիս Ընկերությունում որպես ղեկավար աշխատելու հիմնաորող փաստաթղթերը):

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3-րդ տողում բացակայում է հայտարարգիրը ներակացնող անձի ստորագրությունը (շտկման ենթակա է Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը):

- «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաթեթը թերի է. մասնավորապես Հավելված 1.3-ով չեն ներկայացվել յուրաքանչյուր աշխատակցի որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները:

vi. Նույն արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները (տե՛ս 2.2 և 2.3 կետը) շտկելու նպատակով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի 24.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1-րդ և 1.2-րդ կետերի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունների գծով Ընկերությունից ստացվել են շտկումներ ենթադրող փաստաթղթերը, որոնք ուսումնասիրելուց հետո Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության 2.2 կետում առկա թերություններից 3-րդ և 4-րդ կետերը համարվում են շտկված: 2-րդ կետի մասով ընկերությունից ստացված փաստաթղթերը ապացուցում են ընկերության անդամացկությունը Բեյքեր Թիլլի Ինթերնեյշնլ կազմակերպությանը որպես անդամ, սակայն չի ստացվել որևէ փաստաթուղթ, որը կապացուցեր Բեյթեր Թիլլի Ինթերնեյշնլ կազմակերպության մասնակցությունը ընկերության կանոնադրական կապիտալում կամ հայաստանյան մասնաճյուղ/ներկայացուցչություն լինելը, ուստի այս կետով ներկայացված փաստաթղթերը համարվում են անբավարար: Ինչ վերաբերում է 1-ին կետին, ապա ընկերության կողմից ներկայացվել է դատարանի կողմից կայացված որոշում, որով կիրառվել է հայցի ապահովման միջոց, այն է՝ «...պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը...», մինչդեռ դատարանը չի բավարարել ընկերության կողմից միջնորդվող մեկ այլ ապահովման միջոցը, այն է՝ «...արգելել ՀՀ ֆինանսների նախարարությանը կատարել այնպիսի գործողություններ կամ ընդունել լիցենզիայի հետ կանչման վերաբերյալ վարչական ակտեր, որոնք կսահմանափակեն կամ կարող են սահմանափակել «Բեյքեր

Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունքները և/կամ օրինական շահերը...»: Այսպիսով, հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետի պահանջը առ այն, որ Ընկերությունը պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում, չի բավարարվել, ինչն էլ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն նշանակում է, որ այս պահին Ընկերությունը չունի աուդիտորոկան ծառայություններ մատուցելու իրավունք:

viii. Վերոգրյալներով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է, վերը նշված հիմքով մերժել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին (ինչպես նաև «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին):

ix. «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները (հրավերի Հավելված 1.3-ով չեն ներկայացվել յուրաքանչյուր աշխատակցի որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները) շտկվել են:

x. Նույն արձանագրության 1.3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային պայմաններին բավարարող «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների: Բանակցությունների անցկացման համար նիստ հրավիրել ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում, 2021 թվականի դեկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին, բանակցությունների վարման համար սահմանել 40 րոպե ժամանակ:

xi. Հանձնաժողովի 29.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ առաջարկված գնի նվազեցման նպատակով նախատեսվելիք միաժամանակյա բանակցություններին (ք. Երևան, Մլեք Մանուկյան 5, 29.12.2021թ. ժամը 12:00-ին) ներկայացել է «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, սակայն 1-ին, 2-րդ և 3-րդ չաւիաբաժինների համար գնային առաջարկը մնացել է անփոփոխ:

xii. Նույն արձանագրության 2.1-րդ և 2.2-րդ կետերի համաձայն՝ Հանձնաժողովը, արձանագրելով, որ «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը

գերազանցում է գնման հայտով սահմանված նախահաշվային գինը, որոշել է «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների գծով ճանաչել չկայացած:

xiii. www.gnumner.am կայքում 29.12.2021թ.-ին հրապարակվել է «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

xiv. ՀՀ վարչական դատարանի (նախագահությամբ դատավոր՝ Հր. Այվազյանի) 17.03.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը մասնակի բավարարելու մասին կայացված որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) համաձայն՝ *«... Տվյալ դեպքում նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակներում քննության առարկա է հանդիսանում <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձի կարգավիճակից բխող <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության և ՀՀ ֆինանսների նախարարության միջև իրավահարաբերության առկայությունը ճանաչելը, իսկ այդ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը կարող է ճանաչվել միայն գործն ըստ էության լուծող դատական ակտով, և որոշակի հայցի ապահովում չկիրառելու և հայցի հնարավոր բավարարման դեպքում, գործի քննության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում կարող են խախտվել հայցվորի իրավունքները, և ըստ էության անհնարին կդառնա կամ կդժվարանա վճռի կատարումը, քանի որ կայացված վճիռը կկորցնի իր նշանակությունը, հետևաբար՝ Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ Ֆինանսների նախարարությանը պետք է արգելել պահանջել <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության թիվ ԱԾ №054 <<Աուդիտորական ծառայությունների իրականացման>> լիցենզիան, և պահպանել <<Բեյքեր Թիլլի Արմենիա>> ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը՝ մինչև սույն գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:...»:*

Որոշմամբ թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով ներկայացված հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է մասնակի.

ՀՀ ֆինանսների նախարարությանը արգելվել է պահանջել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի թիվ ԱԾ №054 «Աուդիտորական ծառայությունների իրականացման» լիցենզիան, և պահպանվել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը)՝ մինչև տվյալ վարչական գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Մնացած պահանջների մասով հայցի ապահովման միջնորդությունը մերժվել է:

Որոշումը՝ հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասով, օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

xv. ՀՀ վարչական դատարանի (նախագահությամբ դատավոր՝ Հր. Այվազյանի) 27.04.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին կայացված որոշման համաձայն՝ թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով պատասխանող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժվել է: Որոշումն օրինական ուժի մեջ է մտել կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Վերոնշյալ որոշման համաձայն՝ *«…Դատարանը գտնում է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը, քանի որ հայցի ապահովման միջոց կիրառելու դեպքում պետք է հաշվի առնվի հայցվորի շահերը և այն նպատակները, որը հետապնդում է հայցի ապահովման միջոցի կիրառման դատավարական ինստիտուտը, քանի որ հայցի ապահովման միջոցի վերացման պայմաններում անձը կզրկվի իր ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն ստանալու հնարավորությունից:*

Սույն գործով Դատարանի կողմից հայցի ապահովման միջոցի կիրառումը նպատակ է հետապնդել ապահովելու հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը, այն համատեքստում, որ հայցի հնարավոր բավարարման և իրավահարաբերության առկայությունը ճանաչվելու դեպքում, հայցի ապահովման միջոց կիրառված չլինելու պայմաններում կստեղծվի իրավիճակ, որ գործի քննության ողջ ժամանակահատվածում հայցվորը իրավաբանորեն ունեցել է հնարավորություն որոշակի կարգավիճակով իրացնելու իր իրավունքները, սակայն փաստացի զրկվել է այդ հնարավորությունից, և դատարանի վճիռը այդ առումով հնարավոր չի լինի կատարել:

Դատարանի գնահատմամբ, սույն դեպքում պատասխանող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից միջնորդությամբ չեն ներկայացվել հիմնավոր փաստարկներ և ապացույցներ, որոնց քննության արդյունքում կիրառված հայցի ապահովման միջոցը ենթակա կլիներ վերացման: …»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 30.12.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու

հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Զարգացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակը կլիներ ձևական, եթե դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի կազմակերպումը չլիներ տնտեսող, արդյունավետ և օգտավետ:

Այն է՝ ընթացակարգերի կազմակերպումը պետք է լինի՝

1. տնտեսող, այսինքն՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների, ֆինանսական միջոցների մինիմալացմամբ՝ պահպանելով նախապես սահմանված որակը:

2. արդյունավետ, այսինքն՝ արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը: Նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար օգտագործված նյութական և ոչ նյութական միջոցների համարժեքությունը ձեռք բերված արդյունքին, երբ ապահովվում է կատարված ծախսի և Պատվիրատուի համար դրա օգտակարության միջև պատշաճ հարաբերակցությունը:

3. Օգտավետ՝ գնման առարկան համարժեք հատուցմամբ ձեռք բերելու նպատակով դրան հասնելուն ուղղված ընթացակարգերի արդյունքի կամ նպատակի առավելագույն մակարդակի ապահովում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել նաև, որ իրավունքի սկզբունքները հիմնարար գաղափարներ են, որոնք արտահայտում են հասարակական կյանքի օբյեկտիվ օրինաչափությունները, ուղղակի կամ անուղղակի ամրագրվում են իրավական նորմերում, իրավական համակարգի հենասյունն են, կոչված են կարգավորելու հասարակական հարաբերությունները, ունեն համապարտադիրության հատկանիշ:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի

ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

26.12.2002թ.-ին ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ աուդիտորական ծառայության իրականացումն առանց լիցենզիայի արգելվում է: ...:

04.12.2019թ.-ին ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ մատուցելու իրավունք այն ամսաթվից, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի՝ աուդիտորական կազմակերպությունների, աուդիտորների և փորձագետ հաշվապահների ռեեստրում (այսուհետ նաև՝ ռեեստր):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունը, որի մասին տեղեկությունները պետական գրանցման ամսաթվին հաջորդող օրվանից սկսած՝ 60 աշխատանքային օրվա ընթացքում, չեն ներառվել ռեեստրում, չի կարող օգտագործել «աուդիտ», «աուդիտոր», «աուդիտորական» բառերը կամ դրանց հոլովաձևերն իր անվանման մեջ:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ 2002թ.-ին ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի իմաստով աուդիտորական ծառայության իրականացումը պետք է կատարվեր լիցենզիայի հիման վրա, իսկ արդեն 2019թ.-ին ընդունված համանուն օրենքի իմաստով աուդիտորական կազմակերպությունը ձեռք է բերում աուդիտորական ծառայություններ

մատուցելու իրավունք, երբ նրա մասին տեղեկությունները գրանցվում են մասնագիտացված կառույցի ռեեստրում:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «Հանրային հեռարձակողի խորհրդի աշխատակազմ» ՊՀ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով 15.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի հիման վրա՝ ֆինանսական միջոցներ նախատեսված չլինելու հիմքով:

Պայմանագրի Հավելված 1-ով, բացի այլ չափորոշիչներից սահմանվել է նաև, որ՝

- Կատարողը պետք է ունենա աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա և պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված համապատասխան մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում:
- Կատարողը պետք է հանդիսանա Միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն:

Հանձնաժողովի 22.12.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաթեթում հրավերի պահանջների նկատմամբ առկա է եղել անհամապատասխանություններ. Մասնավորապես՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից՝

- Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետում ներկայացված պահանջը, մասնավորապես՝ Ընկերությունը չունի «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունք. Ընկերությունը ներառված չէ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում:
- Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույց 2-րդ կետում ներկայացված պահանջը, մասնավորապես յիրական շահառուների վերաբերյալ հայտարարգրով ներկայացված տվյալներով չի ապահովվում Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության (Bakertilly international) մասնակցությունը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կանոնադրական

կապիտալում ե/կամ ներկայացված չեն Բեյքեր Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի փոխկապակցված լինելու հիմնավորումները (որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն) (Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը ենթակա է շտկման և նոր հայտարարագրում ներկայացված շտկված տվյալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել և/կամ ներկայացնել Բեյքեր- Թիլլի միջազգային կազմակերպության և «Բեյքեր-Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի որպես հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն փոխկապակցվածությունը հիմնավորող փաստաթղթերը):

- Չի պահպանվել հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 3-րդ կետում ներկայացված պահանջը. Մասնավորապես՝ հայտով ներկայացվել է, որ ընկերության ղեկավարության 67%-ը ունի ACCA որակավորում, այնինչ հրավերով պահանջվում էր, որ ղեկավարության առնվազն 80%-ը ունենա ACCA որակավորում (շտկման ենթակա է Հավելված 1.3-ը՝ «Տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին համապատասխանության վերաբերյալ տեղեկատվություն»-ը և շտկված Հավելված 1.3-ում ներկայացված տփալների հիմնավորող փաստաթղթերը պետք է նույնպես ներկայացնել (ընդհանուր ղեկավարների ցանկը, ACCA որակավորում ունեցողների համապատասխան հավաստագրերը և վերջիններիս Ընկերությունում որպես ղեկավար աշխատելու հիմնաորող փաստաթղթերը):

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի 1.3.3-րդ տողում բացակայում է հայտարարգիրը ներակացնող անձի ստորագրությունը (շտկման ենթակա է Հավելված 1.2-ը՝ «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր»-ը):

«ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաթեթը թերի է. մասնավորապես Հավելված 1.3-ով չեն ներկայացվել յուրաքանչյուր աշխատակցի որակավորումները հավաստող փաստաթղթերի պատճենները:

Նույն արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 24.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1-րդ և 1.2-րդ կետերի համաձայն՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված

փաստաթղթերում առկա թերությունների գծով Ընկերությունից ստացվել են շտկումներ ենթադրող փաստաթղթերը, որոնք ուսումնասիրելուց հետո Գնահատող հանձնաժողովի N 2 արձանագրության 2.2 կետում առկա թերություններից 3-րդ և 4-րդ կետերը համարվում են շտկված: 2-րդ կետի մասով ընկերությունից ստացված փաստաթղթերը ապացուցում են ընկերության անդամացկությունը Բեյքեր Թիլլի Ինթերնեյշնլ կազմակերպությանը որպես անդամ, սակայն չի ստացվել որևէ փաստաթուղթ, որը կապացուցեր Բեյթեր Թիլլի Ինթերնեյշնլ կազմակերպության մասնակցությունը ընկերության կանոնադրական կապիտալում կամ հայաստանյան մասնաճյուղ/ներկայացուցչություն լինելը, ուստի այս կետով ներկայացված փաստաթղթերը համարվում են անբավարար: Ինչ վերաբերում է 1-ին կետին, ապա ընկերության կողմից ներկայացվել է դատարանի կողմից կայացված որոշում, որով կիրառվել է հայցի ապահովման միջոց, այն է՝ «...պահպանել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը...», մինչդեռ դատարանը չի բավարարել ընկերության կողմից միջնորդվող մեկ այլ ապահովման միջոցը, այն է՝ «...արգելել ՀՀ ֆինանսների նախարարությանը կատարել այնպիսի գործողություններ կամ ընդունել լիցենզիայի հետ կանչման վերաբերյալ վարչական ակտեր, որոնք կսահմանափակեն կամ կարող են սահմանափակել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲ ընկերության աուդիտորական գործունեություն իրականացնելու իրավունքները և/կամ օրինական շահերը...»: Այսպիսով, հրավերի հավելված 6-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին կետի պահանջը առ այն, որ Ընկերությունը պետք է ներառված լինի ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հավատարմագրված «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ մասնագիտացված կառույցի կողմից վարվող ռեեստրում, չի բավարարվել, ինչն էլ «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն նշանակում է, որ այս պահին Ընկերությունը չունի աուդիտորոկան ծառայություններ մատուցելու իրավունք:

Վերոգրյալներով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է, վերը նշված հիմքով մերժել «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը, քանի որ հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին (ինչպես նաև «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին), իսկ «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա թերությունները շտկվել են, ինչով պայմանավորված Հանձանժողովը, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, որոշել է 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների համար հաղթողին որոշելու նպատակով կասեցնել հանձնաժողովի նիստը և առաջարկված գնի նվազեցման նպատակով, ոչ գնային

պայմաններին բավարարող «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ին հրավիրել միաժամանակյա բանակցությունների:

Հանձնաժողովի 29.12.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ առաջարկված գնի նվազեցման նպատակով նախատեսվելիք միաժամանակյա բանակցություններին ներկայացել է «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, սակայն 1-ին, 2-րդ և 3-րդ չաափաբաժինների համար գնային առաջարկը մնացել է անփոփոխ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, արձանագրելով, որ «ԲԻ-ԴԻ-0 Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած գնային առաջարկը գերազանցում է գնման հայտով սահմանված նախահաշվային գինը, որոշել է ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22 ծածկագրով գնման ընթացակարգը 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների գծով ճանաչել չկայացած, որի վերաբերյալ www.gnumner.am կայքում 29.12.2021թ.-ին հրապարակվել է «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարություն:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված և համադրված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ, տվյալ դեպքում, «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտն անբավարար գնահատելով և մերժելով գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ Հանձնաժողովը, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ստանալով թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով 17.03.2021թ.-ին կայացված դատարանի որոշումը, պետք է գրավոր զեկուցեր պատվիրատուի ղեկավարին, որն էլ զեկուցագիրը ստանալու օրը հրամանով կասեցներ հանձնաժողովի գործունեությունը և հանձնարարեր պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն՝ համաձայն Կարգի 27-րդ կետի կամ եթե հանձնաժողովի անդամները դատարանի որոշումը գնահատելու համար չունեին անհրաժեշտ մասնագիտական կարողություններ, ապա հանձնաժողովի կազմում ներառելու նպատակով կարող էին հրավիրվել համապատասխան գիտելիքներով օժտված փորձագետ (մասնագետ)՝ համաձայն Կարգի 15-րդ կետի:

Գործով ձեռքբերված փաստական տվյալների՝ մասնավորապես թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով 17.03.2021թ.-ին և 27.04.2021թ.-ին կայացված որոշումների ուսումնասիրության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի աուդիտորական գործունեություն իրականացնելու

լիցենզիա ունեցող անձի կարգավիճակը (իրավիճակը) հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությունը մասնակի բավարարելու մասին կայացված որոշմամբ պահպանվել է, որի արդյունքում Ընկերությունը ձեռք է բերել աուդիտորական գործունեություն իրականացնելու հնարավորություն: Այլ կերպ ասած՝ 17.03.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով կայացված Որոշումը Ընկերությանն օժտել է նույն իրավասությամբ և ըստ այդմ՝ նաև պարտավորությամբ, որոնք 2002թ.-ի ընդունված «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի շրջանակներում և տրամաբանության սահմաններում վերջինս կարող էր ակնկալել:

Ավելին, ՀՀ վարչական դատարանի (նախագահությամբ դատավոր՝ Հր. Այվազյանի) 27.04.2021թ.-ին թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով հայցի ապահովման միջոցը վերացնելու վերաբերյալ միջնորդությունը մերժելու մասին կայացված որոշմամբ դատարանը գտել է, որ հայցի ապահովման ինստիտուտը նպատակ է հետապնդում երաշխավորելու հետագայում ընդունվող դատական ակտի կատարումը, քանի որ հայցի ապահովման միջոց կիրառելու դեպքում պետք է հաշվի առնվի հայցվորի շահերը և այն նպատակները, որը հետապնդում է հայցի ապահովման միջոցի կիրառման դատավարական ինստիտուտը, քանի որ հայցի ապահովման միջոցի վերացման պայմաններում անձը կզրկվի իր ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն ստանալու հնարավորությունից: Թիվ ՎԴ/1299/05/21 վարչական գործով Դատարանի կողմից հայցի ապահովման միջոցի կիրառումը նպատակ է հետապնդել ապահովելու հայցվորի ենթադրյալ խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը, այն համատեքստում, որ հայցի հնարավոր բավարարման և իրավահարաբերության առկայությունը ճանաչվելու դեպքում, հայցի ապահովման միջոց կիրառված չլինելու պայմաններում կստեղծվի իրավիճակ, որ գործի քննության ողջ ժամանակահատվածում հայցվորը իրավաբանորեն ունեցել է հնարավորություն որոշակի կարգավիճակով իրացնելու իր իրավունքները, սակայն փաստացի զրկվել է այդ հնարավորությունից, և դատարանի վճիռը այդ առումով հնարավոր չի լինի կատարել:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից բողոքով բերված փաստերն ու հանգամանքները սույն որոշմամբ բերված իրավական ու փաստական հանգամանքների և արված վերլուծությունների ամբողջությամբ հիմնավոր են, որպիսի պայմաններում Հանձնաժողովի կողմից չի ապահովվել Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներով սահմանված սկզբունքների կիրառումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ինչպես նաև ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերն ու ներկայացված բողոքի փաստական և իրավական հիմքերը՝ Բողոքներ քննող անձն եզրահանգում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից չի պահպանվել Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 42-րդ և Հրավերի 8.10-րդ կետերով սահմանված դրույթը, որի արդյունքում խախտվել է Օրենքի 3-րդ և 7-րդ հոդվածներով սահմանված պահանջները, որպիսի պայմաններում «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն:

Անդրադառնալով Հրավերով պահանջվող կատարողի միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն հանդիսանալու պայմանին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բողոքի քննության ընթացքում ձեռքբերված փաստական տվյալներով (բանավոր և գրավոր) հիմնավորվում է, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն և «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ն «անդամակցում են» միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպութունների, այն է՝ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն «Բեյքեր Թիլլի Ինթերնեյշնլ» միջազգային կազմակերպության գործառնական տնօրենի կողմից տրված անդամակցության հավաստագրով, իսկ «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ն իր շահաբաժնում «ԲԻ-ԴԻ-Օ Եվրասիա Բ.Վ.» միջազգային կազմակերպության ունեցած մասնակցությամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի և «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հայտերը համապատասխանում են Հրավերով պահանջվող կատարողի միջազգային վարկանիշ և ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ /ներկայացուցչություն /դուստր ընկերություն հանդիսանալու պայմանին, ուստի այդ հիմքով ենթակա չեն անբավարար գնահատման և մերժման: Ըստ այդմ՝ Բողոքը «ԲԻ-ԴԻ-Օ Արմենիա» ՓԲԸ-ի հայտը նշված հիմքով մերժելու մասին ներկայացված պահանջն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 30.12.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/01 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

1. Պարտավորեցնել «ՀՀԽԱ-ԳՀԾՁԲ-01/22» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 24.12.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 1.1-րդ կետով, «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ի հայտը մերժելու և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

2. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**